ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77
araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2025 թվական N 1117-Ա

ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, 36-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1–ին ենթակետի «ա» պարբերությամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ԱՐԴ/0439/02/25 քաղաքացիական գործով 2025 թվականի սեպտեմբերի 08-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը, որի համաձայն՝ քաղաքացի Տիգրան Մխիթարի Մխիթարյանը /ծնված՝ 02.12.1996թ./ ճանաչվել է անգործունակ, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձի մոր՝ Սուսաննա Ջիլբերթի Միրզոյանի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի Իսակովի փողոցի թիվ 10 տան բնակիչ Տիգրան Մխիթարի Մխիթարյանի /ծնված՝ 02.12.1996թ., անձնագիր՝ AL0544726, տրված՝ 14.12.2023թ., 060-ի կողմից/ նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով նրա

մորը՝ Սուսաննա Ջիլբերթի Միրզոյանին /ծնված՝ 02.10.1972թ., անձնագիր՝ AU0561406, տրված՝ 24.12.2021թ., 060-ի կողմից):

2. Սուսաննա Ջիլբերթի Միրզոյանին վերապահել ի շահ իր որդու՝ Տիգրան Մխիթարի Մխիթարյանի, առանց հատուկ լիազորագրի, կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրա իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:

3. Հսկողություն սահմանել Տիգրան Մխիթարի Մխիթարյանի նկատմամբ խնամակալ նշանակված Սուսաննա Ջիլբերթի Միրզոյանի գործունեության նկատմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025թ. նոյեմբերի 04
Արաքս համայնք